նը փակված բոլոր կանայք իրենց տներից ելնում էին զբոսնելու և շահին տեսնելու: Տանից ելավ նաև այս Գոզալ անունով կինը: Իսկ շահը աչքերը շրջում էր այս կողմ, այն կողմ, նայում էր կանանց: Նայելիս տեսավ Գոզալին և կանգնեց այնտեղ: Մի ներքինի ուղարկեց նրան տեսնելու և որտեղից և ով լինելը հարցնելու: Ներքինին գնաց և ամեն ինչին տեղեկացավ, եկավ շահին պատմեց: Իսկ շահը (մարդ) ուղարկեց Ջուղայի[78] ավագների մոտ և պատվիրեց, թե այսինչ անուն կնոջը դրեք այդ ներքինիի հետ և ուղարկեք, գա ինձ մոտ: Ներքինիները եկան կամքով, թե ակամա նրան առան տարան շահի մոտ: Շահը տեսնելով նրան՝ ինչպես խելագար ապուշ կտրեց, սիրեց նրան չափից ավելի և որևէ տեղ գնալիս տանում էր հետը: Իսկ եթե ընթրիքի էր բազմում, նստեցնում էր իր ծնկներին, սիրում և գգվում էր նրան: Իսկ երբ այս վերջինը ելնում, պարում էր ու պարերգեր էր ասում և մեջքը շարժում ու ճոճում էր, շահը խնդում, ուրախանում էր՝ նրան տեսնելով:

Եվ այդպես շատ ժամանակ մնալով երբեք հավատքի նկատմամբ երկմտություն չունեցավ (կինը), և շահն էլ հավատի առթիվ որևէ բան չասաց, և այդպես կինը պահպանում էր քրիստոնեական հավատքը, երբեմն-երբեմն գնում էր եկեղեցի և աղոթում: Ոչ ոք նրան որևէ բան չէր ասում:

Այնպես եղավ, որ շահը գնաց Բաղդադ՝ գրավելու այն: Գոզալին հետը չտարավ Բաղդադ, Գոզալը մնաց Սպահանում: Շատ չանցած Գոզալը հիշեց Աստծու ահեղ դատաստանը, մտամփոփեց նաև իր մտքերը և հագավ մենակյացի զգեստ, մտավ հավատավոր կանանց կարգը: Գնաց կույսերի վանքը և ապաշավում էր իր մեղքերը ապաշխարությամբ, առատ արցունքներով քավում էր իր մեղքերը:

Այնպես եղավ, որ շահը գրավեց Բաղդադը և վերադարձավ Սպահան: Օրերից մի օր շահը նստեց ձի և երկու սուրհանդակի հետ գնում էր քաղաքի միջով, և հանկարծ նրան պատահեց սևազգեստ Գոզալը: Շահը ճանաչեց նրան և ասաց. «Ով դու բոզ, մի՞թե դու Գոզալը չես»: Գոզալն ասաց. «Ես եմ՝ քո սևերես ու մեղավոր աղախինը»: Շահը հարցնում է, այդ ի՞նչ տարազ է, որ հագել ես: Գոզալը պատասխանում է. «Հիշեցի Աստծու դատաստանի օրը, մտաբերեցի իմ մեղքերը և հագա այս սևերը, որ գուցե իմ հան-

ցանքներին թողություն գտնեմ»: Իսկ շահը մի պահ լռեց, ապա ձեռքերը երկինք բարձրացրեց և ասաց. «Ով Տեր Աստված, մեզ էլ արժանի արա հավատքին»: Այս ասելով անցավ գնաց: Երբ մի քարընկեց հեռացավ, կանգնեց և իր մոտ կանչեց Գոզալին ու հարցրեց՝ որտե՞ղ ես բնակվում: Գոզալը պատասխանեց. «Ջուղայում շատ են ինձ նման սևազգեստ կանայք, այնտեղ եմ լինում, նրանց հետ նաև ես»: Շահը հարցնում է՝ որտեղի՞ց եք կերակրվում: Գոզալը պատասխանում է. «Քո տերությունից, նաև ինչ որ Աստված պարգևում է, նրանով գոհանում ենք»:

Ապա շահը մի սուրհանդակին թողնում է նրա մոտ և ասում է. «Դու սուրհանդակի հետ դանդաղ կգաս ինձ մոտ», իսկ ինքը մի սուրհանդակով գնաց: Գոզալը լացով ու կսկիծով գնում էր ու մտածում, թե չար բաների համար է կանչում իրեն: Ծանր մտքերով գնում էր, հասավ արքունիք, տեսավ, որ շահը նստած է գահին, գնաց նրա մոտ և ոտքը համբուրեց: Շահը ասաց. «Քեզ ազատագիր կտամ, որպեսզի ոչ ոք քո հանդեպ ենթգություն չանի»: Կանչեց նոտարին և ասաց՝ գրիր այսպես. «Ես՝ Շահ Աբաս, Գոզալ անունով կնոջը ազատագիր տվի, որտեղ էլ լինի, պաշտի քրիստոնեական հավատը: Ոչ ոք սրան հակառակ չլինի հավատի վերաբերությամբ, որովհետև նա քրիստոնյա է: Եթե որևէ մահմեդական դրան մահմեդական ասի, ինքը մահմեդական չէ, իսկ եթե քրիստոնյաները դրան մահմեդական ասեն, իրենք կլինեն մահմեդական»: Այս գրեց, կնքեց և տվեց Գոզալին: Կանչեց գանձապահին և ասաց. «Հիսուն ոսկի բեր և տուր դրան և ասաց՝ «Այդ քեզ ծախսելու փող հագուստի համար»: Խոհարարներին ասաց. «Տասը լիտր բրինձ, հինգ լիտր յուղ, երեք բեռ ցորեն ուղարկեք այնտեղ, որտեղ դա կլինի»: Եվ արին այնպես, ինչպես որ հրամայեց:

Քանի Շահ Աբասը կենդանի էր, Գյոզալը մնաց Սպահանում: Երբ Շահ Սաֆին թագավոր եղավ, Գոզալը վերադարձավ, եկավ Աստապատ: Մի օր նրան է հանդիպում վաղարշապատցի Զաքարիա վարդապետը, նա, որ եղավ Օհանավանքի առաջնորդը: Սա նախածանոթ էր Գոզալին: Վարդապետը պարսկերեն ասում է նրան. «Մուդար, զի քունի, զի հալդարի՞ն»: Գոզալը պատասխանում է. «Շուքրի խուդա հալումարա, խուբաստ տերտերա հաղորդ նաղադան»: Վարդապետն ասում է՝ զիրա: Գոզալն ասում է՝ մի գո-